**Դ Ի Մ ՈՒ Մ / Հ Ա Յ Տ**

ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների

նախարարին կից հասարակական խորհրդի նախագահին

Հարգելի ՀՀ ՏԿԵ նախարարություն,

Սույնով հայտնում եմ ՀՀ ՏԿԵ նախարարին կից ձևավորվող Հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու ցանկության մասին և հավաստում, որ համապատասխանում եմ ֆիզիկական անձանցից և հատկապես համայնքներից ներգրավվող ներկայացուցիչներին ներկայացվող բոլոր պահանջներին:

**Հիմնական տվյալներ՝**

Անուն, Ազգանուն-Տաթևիկ Ղազարյան

Հաշվառման հասցե- Ք. Արտաշատ, Մռավյան 26

Գործունեության համայնք/մարզ - Արարատի մարզ, ինչպես նաև ՀՀ բոլոր մարզերը

Փորձառության հիմնական ոլորտ- Տեղական ինքնակառավարում (ՏԻՄ) և մասնակցային կառավարում

**Փորձառության և մասնագիտական համապատասխանության հիմնավորում (7+ տարվա փորձ)**

Որպես քաղաքագետ և ՏԻՄ փորձագետ՝ վերջին 7 տարիներին իմ մասնագիտական գործունեությունը կենտրոնացած է եղել ՀՀ մարզերում Տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների ամրապնդման և քաղաքացիական հասարակության ներգրավման խթանման վրա, ինչը լիովին համապատասխանում է Խորհրդի հիմնական նպատակներին:

1. **Մասնակցային կառավարում և ՏԻՄ բարեփոխումներ.**

    - Արդեն 2 տարի է, ինչ Ժողովրդավարության և անվտանգության տարածաշրջանային կենտրոնում իրականացնում եմ Մասնակցային Բյուջետավորման (ՄԲ) ծրագրեր Արտաշատ, Մասիս, Գավառ, Եղեգիս և այլ խոշորացված համայնքներում: Ներկայումս GIZ-ի հետ համատեղ աջակցում եմ 21 համայնքներում ՄԲ-ի մասնակցության հաջողության պատմությունների մոնիտորինգին և տարածմանը, այդ թվում՝ նախապատրաստելով ոլորտային TEDx միջոցառում:
    - «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնում աշխատելիս ներգրավված եմ եղել մարզերի բնակիչների հակակոռուպցիոն կրթության և ՏԻՄ ընտրությունների համակարգման մեջ: Ներկայումս իրականացնում եմ Երևանի քաղաքապետարանի մոնիտորինգային ծրագիրը:

2. **Կարողությունների զարգացում և փորձագիտություն.**

- Որպես համայնքային համախմբող՝ ՄԱԿ Զարգացման Գրասենյակի (UNDP) հետ 2024թ. ՀՀ բոլոր մարզերում իրականացրել եմ Ավագանու անդամների վերապատրաստման ծրագրեր:
- Տեղական ժողովրդավարության դպրոցում դասավանդում եմ «ՀՀ Հանրային կառավարման համակարգը՝ մասնավորապես Տեղական ինքնակառավարումը» թեման:
- Համագործակցում եմ Համայնքների ֆինանսիստների միության հետ, ինչպես նաև տրամադրում եմ փորձագիտական աջակցություն առանձին համայնքներին՝ իրենց ծրագրերի իմպլեմենտացիայի հարցում:
- Ներգրավված եմ նաև ՏԻՄ օրենսդրության փոփոխության փորձագիտական համայնքում, հանդես եմ գալիս հոդվածներով և առաջարկություններով

3. **Ներառականություն և երիտասարդություն.**

- Անցկացնում եմ դասընթացներ կանանց և երիտասարդների հետ՝ նպատակ ունենալով զարգացնել նրանց համայնքային առաջնորդության հմտությունները և ապահովել համայնքների գենդերազգայուն և երիտասարդակենտրոն զարգացումը:

Հաշվի առնելով, որ ապրում եմ Արարատի մարզում և Երևանում, ունեմ ՀՀ բոլոր մարզերի ՏԻՄ-երի և բնակիչների հետ աշխատելու լայն փորձառություն, ինչպես նաև ՀՀ բոլոր մարզերի համայնքային հասարակական կազմակերպությունների հետ եմ համագործակցում, կարող եմ ապահովել համայնքային շահառու խմբերի, այդ թվում՝ երիտասարդների, կանանց, տեղական ՀԿ-ների կարծիքի և խնդիրների արդյունավետ ներկայացումը Հասարակական խորհրդի աշխատանքներին:

Հուսով եմ, որ իմ մասնագիտական գիտելիքներն ու փորձը կծառայեն ՏԿԵ նախարարության ոլորտային քաղաքականությունների արդյունավետ իրականացմանը:

---

**Հարգանքով՝** **10.12.2025**

**ՏԻՄ փորձագետ**

**Տաթևիկ Ղազարյան**

**077 292 392**

**ghazaryantat1@gmail.com**